



ՊԵՏՐՈՍ

ՊԵՏՐՈՍԱՆԵ

Հ Ի Ն Գ Մ Ա Յ Ի Ս 1821

Հեռու ափեր թափառականը տըխուր
Ըլլպանոսներ իրենց նաւին առին մէջ:
Դիւցազնական պետութեան դոյզըն նըլիար՝
Ես աքսորած էի ցաւըս Հընդկաստան:
Հեռու սակայն Սարէն՝ նըժղէնս հինգ տարի՝
Արեւուն տակ աւելի զուարթ կը նաւեմ:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Տէր իմ, գոչեց նաւազը, Սորբը-Հեղինէ,
Եւ դիւցազն հոն է որ ահա կը հիւծի:
Հոն կը մարի ձեր ոխն ազիւ Սպանոսներ.
Շըղթաներուն՝ դահիճներուն անէծք բիր
Ես չեմ կարող, չեմ կարող զինքն ազատել,
Պերճ մահերու ժամանակն ալ անցած է:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Քուն է գոցէ անպարտելի այն զընդակն
Որ ջախջախեց քրտան գահ մէկ անգամէն:
Չէ՞ հնար որ ան զարհուրելի կանգնուտով
Երթար մեռնէր ալքաներու զըլխուն վրայ.
Ո՞հ, սէ. այդ ժայռը կը ջարդէ ամէն յոյս.
Արծին ալ չէ զաղտնիքներուն դից գիտակ:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Յաղթութիւնն հետը վազելէն՝ կը յոգնէր.
Յոգնած մընաց. ինք ալ անոր չըսպասեց:
Այս մարդը մեծ երկու անգամ մատնուած՝
Կըրցաւ ապրիլ. բայց ինչ օձեր կը պատեն

Քայլերն. ամէն դափնի իբր հիւթ՝ ունի թոյն,
Կը պըսպէ մահը ճակատն՝ յաղթական:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Հազիւ թէ նաւ մը նըլմարեն թափառիկ
«Ինքն է արդեօք, կ'ըսեն իշխան եւ արքայ.
«Կու գայ արդեօք նորէն աշխարհն ուզելու:
«Ձիներք փութով երկու միլիոն զինուորներ»:
Եւ ան թերեւս վըշտահար եւ նըկուն
Վերջին հրաժեշտը կ'ուղղէր իր հայրենեաց:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Նըկարագրով մեծ, մեծ հոգւով՝ հանճարով,
Է՛ր մականով զինեց իր խրոխտ սիգուիթին.
Գահոյքներէն երկրի ան շատ զերկիվը՝
Այս խարակին վրայ կ'երեւի պաղպաղուն:
Իր փառքը հոն է զերդ փարոս մ'անսահման
Նոր աշխարհին եւ շատ զառամ աշխարհին:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Ինչ կը տեսնէք ափունքն, ազնիւ ըլլպանոսք.
Դըրժ՝ մը սեւ. ահ, մեծդ Աստուած, կը սոսկամ:
Ինչ, մեռաւ տն... ո՞վ փառք, ո՞հ, ինչ որբութիւն:
Շուրջըս կու լան իր ոսոխներն անհամար:
Լըռիկ մընջիկ հեռու փախինք այս ժայռէն,
Կը թողըքք ահա արեւն ալ երկիրքն:
Ես հէք զինուոր պիտի տեսնեմ ես Ֆրանսան,
Պիտի փակէ աչքերըս ձեռքը զաւկիս:

Թրգմ. Հ. Ա. Աճառեան

1. Պետաւճի քերթուածն ունի զբարբար թարգմանութիւն մ'ալ (տես «Բազմ.» 1850, Ը. 150):